Պարույր Սևակ

Անտարբերություն

Անտարբերությո՞ւնը...
Ուխտյալ թշնամու պես հետևում է նա ինձ,
Բուսնում խոտի՛ նման,
Թառում փոշու՛ նման,
Խեղդում խորխի՛ նման:
(Գերանդի՞ եմ դառնում,
Խոզանա՞կ եմ դառնում,
Հա՞զ եմ դառնում):
Եթե կարճակոճը իր հասակը ներեր
Ու ձեռքը հասցներ իմ կոկորդին բարակ՝
Խեղդամահ էր արել նա ինձ վաղո՞ւց:
(Եվ մինչ նա շարունակ ձեռքն է մարզում-վարժում,
Ես էլ աշխատում եմ հասակ նետել անվերջ):
Իմ բերանն է փակում հազա՞ր ու մի ձևով,
Իր համբույրո՞վ անգամ,
Սո՛ւտ համբույրով նույնիսկ:
(Եվ մարմինս է դառնում համատարած բերան,
Ու բերանս փակող համբո՞ւյրն անգամ, նա՛ էլ,
Որ... ես խոսքս խոսեմ,
Ասելիքս ասեմ
Եվ դրանով մարդուս ի՛ր դասի մեջ դասեմ,

Մեզ ասո՛ւն են ասում,
Ո՛չ անասուն)...
Ա՛խ, այս մշտափոփոխ-ինքնաբեկող,
Ամե՛ն ինչի տակից միշտ դուրս եկող
Անտարբերությո՛ւնը,
Որ հիմա էլ արդեն, երբ այլ հնար չունի,
Աշխատում է մի կերպ ինձ ներշնչել,
Թե խոսելը նույնն է, ինչ... ստելը:
(Ու ես ծա՛նը-ծա՛նը լռությունը
Բարձրացնում եմ խոսքի աստիճանի:
Ու ես ծա՛նը-ծա՛նը խոսքը իջեցնում եմ,
Դնում պատվանդանին քար լռության,
Եվ այդ մթությունից ծնվում է այն բիճը,
Որ սերում է սիրո՛ւց,
Բայց ո՛չ երբեք պարտքից,
Ու կարճ կոչվում է Ճիշտ,
Երկար՝ Ճշմարտություն):
...Եթե ինձ ծնողը ինձ չի ուզում պահել,
Թող որբանոց հանձնի, վնաս չունի՛:
(Շա՛տ ավելի լավ է որբ մեծանալ,
Քան թե ամբողջ կյանքում ապրել միշտ ո՛րբ)...

9.XI.1965թ.
Չանախչի